



ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՅՈՒՆԻՍ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

Ա.

Շնորհալի կոչումն, և Գերագանցութիւն Ներսիսի:

Ջարմանալի բարոյական բերում մը յորգորեր է ամեն ազգի մարդիկ՝ իրենց մէջ կարգէ դուրս և մեծ հանճարով ու գործով յայտնուած անձանց՝ որոշիչ մականունն մը յարմարցնել. զարմանալի է՝ ոչ այնքան մարդկանց գիտողութիւնն, որքան պատշաճ գատողութիւնն և անուանագրութիւնն: Ա՛լ աւելի զարմանալի է՝ այգալիսի յայտարար ա. նուանց՝ անյայտ կերպով մը ծագիլն և գրուիլն. ամենքն գիտեն և կրկնեն այն սեփականեալ կոչ. մունքը, և ոչ զք գիտէ թէ ով հնարեր և տուեր է անոնց. մինչև կրնայ համարձակապէս ձայն Աստուծոյ ըսուիլ և այգալիսի ժողովրդական ա. նուանագրութիւնն: Քան զբազումս յազգաց և ժողովրդոց գերազանց երևի ազգս Հայոց այգալիսի անուանց պատշաճագրութեան մէջ. և շատ հնուց սկսեր է գատել և կնքել իրենները. այսպէս աւելական փոխարէն մ'ընծայելով անոնց ար. ժանեաց:

Մեր բնիկ նախնեաց՝ Հայկազանց՝ շատին ա. նուանքն՝ նշանականք են, և թուին յետոյ յարմարեալ ըստ իւրաքանչիւր գործոց կամ հանգա. մանաց, ինչպէս Շարա, Անուշաւան, որ և Սօս, և յայտնապէս՝ Գեղեշի՝ Արայ, որոյ հակառակ և Այգեղեշի՝ Տորք. և նոյն ինքն նահապետն ազգիս Հայկ՝ իր Զարտարնեաւագրութեանն համար՝ Այգեղեշ: Արշակունեաց ատեն ալ թագաւորք և զօրավարք նշանակուած են մականուամբ. Տըր.

դաս՝ Սէֆ, իր որդին Խոսրով՝ պղտիկ ըլլալով մարմնով Կոփալ. Սմբատ Սպարապետն Բ Արտա. շիսի՝ Այրաթալ. Մուշեղ Մամիկոնեան՝ 'ի վերջ Դ զարու՝ Քաջալար, որ և Սպիտակալի ըստ Շապհոյ արքայի Պարսից. իր ցեղէն սրբազանեալն Վարդան՝ Քաջ և Կարմիր. և յետ սոցա այլք պէսպէս յարմար կոչմամբք. ոմն Գայլ՝ Վահան, ոմն Մա. կէր՝ Աշոտ, ոմն Երվաթ (Աշոտ Բ), ոմն Ողբիմ (Աշոտ Գ), ոմն Տիգրան (Սմբատ Բ), և այլն:

Բայց աւելի որոշ և բացայայտիչ են մնաւոր զօրութեանց յայտարար կոչումնքն. ինչպէս, Ան. յալը՝ Դաւիթ, Քերթազկայր՝ Մովսէս Խորենացի, Վերծանող՝ Մամբրէ, Զարգաստն՝ Դաշար, Իմաստ. սէր՝ Յովհան Դ., Հաւար՝ Խոսրովիկ, Համարող՝ Ա. նանիա, Սփեւալ՝ Սարկաւազ Վ., Մեղիկ՝ Գեորգ, Վայաւեր Գրիգորիսեանք. և միանգամայն վարժա. պետքն և հարք գպրութեան լեզուիս՝ Թարգմա. նիշ, և յատկաբար 'ի նոսա՝ Ս. Մահակ և Մես. րովա. ետքինս կոչուի և Մալոյ, յատուկ կամ ծիսական նշանակութեամբ քան բնիկ անուամբ: Թողունք ըստ գործոց և բարուց անուանեալն, որպէս Շիւռ՝ Ներսէս Գ, Մեծաբարձ, Յովհաննէս Է., և ըստ գիպաց՝ որպէս, Գեփորարձ, Քաւալէթ, Մալէտար, Ուպիւիւր, Զափայարոյց, և այլն, և այլն:

Այլ աւաւեւ ևս քաջայայտ և վեհմականք են կրօնական կամ խառն հոգեւոր և մտաւոր տեսու. թեամբ ընծայեալ անուանք ազգայնոցս առ ազ.

գայինս. որոց անտարակոյս առաջին և վեհագոյն է աշխարհածանօթն Լուսաւորի՝ Գրիգոր. այնքան գեղեցկայարմար, մինչև իր արժանաւոր հետեւ. զայց ալ չկարցան յետինք ուրիշ անուն տալ՝ քան Երեմիայ Լուսաւորի¹, սկսեալ ի Մեծացն Ներսիսէ և Սահակայ։ Այս վեհագոյն և յանկագոյն կոչման հաւասար, և թերեւս քան զայն համապատշաճ ընծայելոյն՝ գանեմ Երեմիայի կոչումը Ներսիսի Դ կաթողիկոսի մերոյ։ Լուսաւորիչ և Երեմիայի. որ և է քաջակշիւ քննադատ ոչ ասոնցմէ գեղեցկայարմար անուն կրնար գտնել ընծայելու, և ոչ արժանաւորագոյն անձինք՝ ժառանգելու։ Փափագէի այս երկուքին մէջ դնել զայն՝ որ թէ և բազում իրօք և բազմագոյն ևս սիրով մերն է, այլ և արեամբ և լեզուաւ ըլլար յատկապէս, Ուիլիէրսը։ Այլ թէ հարկ է մեզի սեփականագոյն այսպիսի երրորդութիւն մը կազմել՝ ամենայն համարձակութեամբ կրնամք միջագասել զՊարթևն Ս. Սահակ, իրեն սեփականագոյն եղած գրաւոր կոչմամբն անուանելով՝ Թարգմանիչ. և եթէ Մ. Խորենացի պատմահայր մեր սիրէր մեր հիներէն երբեակ մը կազմել և «կոչել այսպէս՝ ըստ քաջութեան, Հայկ, Արամ, Տիրգրան, քանզի՝ Քաջաց ազգ քաջքն»². աւելի ևս մէք՝ կրնամք ըստ սրբութեան իմաստութեան, և գիտութեան կոչել, Լուսաւորիչ, Թարգմանիչ և Երեմիայի։ Այս ետքի կոչումն՝ Ներսիսի աւելի յայտանիշ և պանծալի եղաւ՝ քան իր երկու ուրիշ կոչումներն ալ, Կալիստի և Երեմիայ։ Փոխանակ առաջնոյն կ'ըսուի ևս Երեմիայ Գրիգորի²։

Բայց ինչ են Երեմիայ՝ որովք լի համարուի մերս Ներսիս, և ուսկից և երբ նախ այդպէս անուաներ է։ — Ըստ սովորական նշանակութեան՝ շնորհք կ'իմանամք տուրք մը, և ի մասնաւորի երկնապարգէս տուրք մ'առ բանականս, զարգարիչ և զարգացուցիչ մտաց և հոգւոյ. և ալ աւելի յատուկ քրիստոնէական մասք՝ աստուածային ձիրք և զօրութիւն մը, որով մարդ կրնայ հաճոյանալ Աստուծոյ, անոր օգնականութեամբ և յայտնեալ կրօնից խորհրդովք։ Նաև մարդկան արտաքին և կենսական առաւելութիւնքն ալ Երեմիայ կ'ըսուին. ինչպէս, քաջողութիւն, ոյժ, ճարտարութիւն, շարժում, և այլն, և մանաւանդ բարեկազմութիւն մարմնոյն կամ իրերապատշաճութիւն մասանց, որ է և գեղեցկութիւն։ Սակայն գեղեցկութեան իսկ կատարելութիւնն է շնորհք. քանզի կրնայ ըլլալ արտաքին ձեւով և չափով գեղեցիկ մը, այլ ներքին վայելուչ յատկութիւններէ զուրկ՝ անշնորհք մնայ, և գեղեցկութիւնն իսկ ոչ լցուցիչ և հանգուցիչ. ընդհանրապէս նուազագոյն գեղեցկութիւն մ'ալ կրնայ արտադրաւ շնորհք ունենալ. վասն զի շնորհքն ալ մարդուաներքին և էական բնութեան (հոգւոյն) զօրութեանց յարմարակցութիւնն է. որ եթէ և ընդ արտաքինոյն միանայ՝ կատարեալ գեղեցիկ և

շնորհակ կ'ընէ զանձը։ Այս յարմարակցութեան մասին մարգարէն, մինչև ներթափ երբ պատշաճապէս չափաւոր կ'ըսուին։ Գուցէ մեր ալ այս շնորհք յարմարակցին առնուած է, և ասով սուրի շնորհք կայ, չկայ և այլն։ — Սակայն բառով երկուսորովութիւնն ալ ոչ կարծեցընել հին և զիցառիկ իգական աստուած, յունական և լատինական ընդ և Կալիստի անձնաւոր շնորհք մը կ'իմացուի հարուստ միանգամայն և պատշաճ։ Են թէ իրենց մէջ և թէ ձիրքը։ Այսպիսի ոմն էր առաւելաւ քան զբազմազան զամենն իր ատեն մերձաւ քան զհամակարգան՝ իրմ վերջը։

Եթէ մեծ և ամենամեծ, ոչ փոքր բազմ սեպելու է նալ. և ոչ փոքր գովուի որ նախ պատշաճեցուց և չուր։ Չեմք գիտեր թէ եւոր ոք էր այս գովելին. գէթ թէ հրեշտակ մը պատու կոչել զՆերսիս. այլ ինձ մարդ կամ մարդիկ՝ գերաջեալ քան զհրեշտակա՝ աստուածեցուցին մեր կաթողիկոսէին ալ կրնար չընել այլ լսողք էին անոր մաքուր կցութեան, վայելուչ խօսի մազան գիտութեանց, ամ և գերագոյն առաքինութե կութեանց. երբ իր շատ ներքին ալ շարակարգելով ինքն սոր գերազանցութիւնն. և սոր և անոնց վաստակոց՝ գանեմ մեծ կամ մեծաց հաւ վայելաբան, չափաբան, և երբ անտուէր մեր եկեղ վերջին վայելութիւն և հերբ ճանչցուէր ճշմարիտ, ըստ հոգւոյ նախատիպ քատուի. երբ հրաշափառապէ չրթուես և ի գիրս՝ յիսու հանգուցիչ հեզութիւն. ել ի յետին հասակը՝ 70 տար միայն յօգուա եկեղեցւոյ, թեան ազգին, և ի բարեզամարդոյն. երբ նկատուի որ բարգեալ և բրդեալ յունտեղութիւնք՝ ասոր բերնոյ կը քայքային, և երկուս իբրեւ երկու հրահալ մեափան յիրար ձուլուելու. ել ճոխացեալ անձ մը՝ իբրեւ ասաւոր և մարմնաւոր ձրիւ ձիրք մը՝ հնչէ զմայլեցընելու

¹ Խղճալի է որ յոմանս չուայլութեամբ այսպէս կոչուած են երբեմն այնպիսի անձինք ալ՝ որոց ոչ միայն Լուսաւորիչ ըլլան այլ և Լուսաւորեալ ըլլան՝ տարակուսական է։

² Ոմանք սխալմամբ կարծեր են այս կոչումն տրուած Ներսիսի լամբրոնացւոյ. թէ և սա ալ արժանի նման կոչման մը, մինչ ինքնին ստիպուած է իմացընելու, որ Լուսաւորիչ զիմքը Երեմիայի կամ Երեմիայի Պողոս Սաքեալ կոչէին։

տին և զԱսորի, զմերձաւոր և զհեռաւոր. — ան-
նախանձ նկատողին խիզճն ալ չի կրնար չկան-
չել բարձրաձայն, թէ այդպիսի նախախնամեալ
աստուածապարգև անձ մը՝ հարկ էր որ ըլլայ
Շնորհալի:

Եթէ իր բազմափայլ ձիրքերն առանձնաբար
առնուին՝ գուցէ գտնուին, և յիրաւի ալ գտուին
թէ յօտարս և թէ 'ի մերայինս' ոչ սակաւ շնոր-
հաւորք, թերեւ աւելի իսկ քան զՆերսէս՝ յայսմ
կամ յայնմ մասին. այլ ոչ ոք հաւասար իրեն
ամենովն մէկտեղ չնորհալի: Նոտ պայծառ կ'է-
րեի իր այս առաւելութիւնն, եթէ թողով մեր
ազգին որ և է ընկերական դասերը, քննենք միայն
ամենէն բարձրագոյնը, Ներսիսի կարգակիցները,
այսինքն զՎաթոյկոսս: Թարգմանչաց օրերէն
մինչև 'ի Շնորհալի 700 տարի էր, իրմէ ալ մինչև
'ի մեզ՝ 700 տարի. այս 14 դարուց մէջ թէ և ոչ
սակաւ արժանաւոր և հանճարաւոր կաթողի-
կոպէ կային 'ի Հայս, սակայն մեր եկեղեցին որ ա-
ռատապէս պատուէ զսուրբս, այլ արգարապէս
ալ մեծս պահանջէ 'ի մեծաց, հիմայ այն երկա-
րաշար 150 կամ 160 հայրապետաց մէջ՝ մէկ սուրբ
մը միայն կը տօնէ յատկապէս. և այս մէկս է Ներ-
սէս 'Ի, Շնորհալին մեր. իր մերձաւոր և ազգա-
կից նախորդաց և յաջորդաց մէջ ալ կային շնոր-
հաւոր և առաքելի կաթողիկոսներ, այլ միայն
իրեն շնորհեցաւ տօնախմբութեան պատիւն ալ,
թէ և Յայսմաւորք մէկ անուամբ ալ յիշեն զԳրի-
գորեանս և Ներսիսեանս. գուցէ եթէ անոնք ա-
ռանձին ժամանակ երեցած ըլլային՝ աւելի պայ-
ծառ և պաշտելի ալ ըլլային. բայց Ներսիսի մե-
ծագոյն լուսափայլութեան քով նուազ իմն մնա-
ցին, մինչև իր հարազատն իսկ Գրիգորիս, որ վա-
րուք ալ սրբագոյն էր քան զայսն: Բայց այս ալ
յայտնի է որ Ներսիսի առաւելութիւնն չէր միայն
'ի սրբութեանն. քանզի հայրապետէ միայն վա-
րուց սրբութիւն պահանջել կատարեալ պահանջ
չէ. այնպիսի առաջնորդի մը՝ ուրիշ կարեւոր ձիրք
ալ պէտք են, զոր և պիտի ցուցնէ մեզի Ներսիսի
վարուց քննութիւնն, և յայտնէ իր շնորհալիու-
թեան պատճառները: Առ այժմ բաւական ըլլայ
այս կարճ յիշատակս ալ գոնէ փափագել տալու
ձանշնալ այս զարմանալի անձը, որ այնքան հա-
րիւրաւոր կարգակցաց մէջ՝ մէկհատիկ եղեր է
բազմապատիկ շնորհափայլութեամբ, և աւելի
փափագել՝ ունենալու երկրորդ Շնորհալիներ,
ինչպէս երկրորդ Լուսաւորիչներ. և եթէ չեն ե-
րեիր երկրորդքն՝ զարմանալ և գոհանալ առաջ
նոց վրայ, երախտագէտ և երախտագիւտ ըլլալ
անոնցմով: Զի ոչ հարեանցի ծանօթութեան կամ
պարծանաց համար տրուած են մեզի, ո՞վ Հայազ-
գիք, Լուսաւորիչ մը, Թարգմանիչ մը և Շնորհա-
լի մը, այլ 'ի մշտնջենաւոր յիշատակ և յօրինակ,
յօգուտ և 'ի խրատ:

Բ.

Ազգատոմմն Շնորհալայ. Պահլաւունիք. —
Քահանայական տոմար Լուսաւորիչի, Աւ-
րիանու, Մանազկերտեայց. — Կարողի-
կոսք:

Հայոց ազգին մեծամեծ երախտագործաց շատն՝

նշանաւոր ծագում ալ ունեցեր են, ըստ երկրա-
ւոր յարգի, այսինքն ազնուական ցեղ մը. Շնոր-
հալայ ազգատոմմն ալ ամենազնիւ է. այլ գուցէ
պատմական հաւաստեաց սահմանէն կ'անցնին
պատմիչք՝ երբ Պահլաւունեայ ցեղը մինչ յԱբրա-
համ նահապետ կը հանեն, սկսեալ 'ի Թորենա-
ցայ (Բ. 48-) մինչև 'ի Սիմէոն Ապարանեցի. որ-
պէս թէ տիեզերահռչակ՝ Պարթևաց կամ Արշա-
կունեաց (որք գրեթէ 700 տարի՝ արևմտեան Ա-
սիոյ մեծ մասին տիրեցին, և Ասիոյ առաջին տե-
րութիւն և ազգ եղան), նախահայրն է Աբրահա-
մու 'ի Քեթուրայ հարձէն ծնեալ վեց որդւոց անդ-
րանին Զեմրան¹. զորս՝ երբ չափահաս եղան՝ Ա-
բրահամ խաւրեց դէպ յարեւել, զատելով յԻսա-
հակայ իր պայազատ զաւակէն: Արեւելց երկիրն՝
հաւանական կարծեօք է Արարիա և սահմանքն.
բայց Հայ պատմիչք կարծեն մինչև զԹուրքա-
ստան աշխարհ. գոնէ Եմրանայ (Զեմրանայ) համար
կ'ըսեն, թէ հօն քաշուեցաւ՝ իր եղբայրներէն մէկ
երկուքը սպաննելուն համար. և հօն ծնաւ իր անդ-
րանիկը Բաղ. այս կամասոր նման (Պահլ, Պալիս,
Պահլա, և այլն,) անուամբ շնորհեցաւ քաղաք
մ'ալ, որ Պարթևաց Թագաւորութեան մայրա-
քաղաքն եղաւ, երբ Արշակ Քաջն ապստամբե-
ցաւ 'ի յաջորդաց մեծին Աղեքսանդրի, ասոր մա-
հուանէն 60 տարի ետև, և կանգնեց իր անուամբ
ծանօթ Թագաւորութիւնը, որ և Պարթևաց
տէրութիւն կոչի, և 60 տարի մ'ալ վերջը ա-
նոր Թոռն Մեծն Արշակ՝ իր Վաղարշակ եղբայրը
գրաւ Թագաւոր Հայոց, 149 տարի նախ քան
զՔրիստոս: Արդ ըստ պատմիչաց մերոց այս մեծ և
հզօր ազգն սերունդ է Աբրահամու 'ի Զեմրանայ.
գուցէ լաւ ևս էր զանազանել Պարթևաց և Ար-
շակունեաց ծագումը՝ 'ի բնիկ Բահլի սերունդոց,
զորս կոչեն Պահլա-ի կամ Պահլաունի. բայց ինքն
իսկ Թորենացին ալ առանց զանազանելու նոյն կը
համարի զՊարթև, զՊահլաւ և զԱրշակունի. և
կը պատմէ որ Քրիստոսի անօրէնութեան սկիզբ-
ները, ծանօթ Աբգար Թագաւորին ատեն, Պար-
թևաց կամ Պահլաւաց Թագաւորացնց մէջ չը-
փոթ և կռիւ ընկաւ ժառանգութեան համար,
յետ մահուան անոնց Արշաւիր Թագաւորին. Աբ-
գար՝ իբրեւ խնամի նոցա և խաղաղարար Թագա-
ւոր՝ գնաց անոնց երկիրը, և ուխտիւ և դաշամբ
հաստատել տուաւ, որ երեք եղբարց մէջէն ան-
գրանիկն (Արտաշէս) Թագաւորէ, իսկ մէկալ եղ-
բարքն յետ Թագաւորին ամեն իշխաններէ նախա-
պատիւ ըլլան, և իրենց անուամբ նոր ցեղապե-
տութիւնք անուանին. ուստի ցեղ երկրորդ եղ-
բօրը որ կոչուէր Կարն կամ Կարէն՝ անուանեցաւ
Կարէն-Պահլա, երրորդին՝ որ էր Սուրեն, Սու-
րենի Պահլաւ. քոյր մ'ալ ունէին Կալ կամ Կոլ-
անուամբ զոր կին տուին Պարթևաց տէրութեան
մեծ սպարապետին, որ անուանի 'ի Պարսից Սի-
թեհպէր կամ Եսթեհպէր, և ըստ Հայոց Ասպահա-
պետ. ասոնց սերունդն ալ ըսուեցաւ Ասպահա-
պետ-Պահլաւ: Եթէ անգրանիկ բուն Թագաւո-
րական ցեղն (Արտաշէսի) ժառանգ չունենար՝ կար-

¹ Մեր պատմիչք Եմրան կ'անուանեն զսա, անուան
Զ գիրք, նախդիր կարծելով և ոչ բնական: — Թորենացին
ըստ թէ Պարթևք ասոր որդիքն էին, այլ անորոշաբար
Քեթուրայի որդւոց համար կ'ըսէ. « Յորոց սերեալ ազգ
Պարթևաց, և այլն. »:

գաւ ասոնց ցեղէն պիտի ըլլար Պարթևաց թագաւորն:

Քրիստոսի Գ դարուն սկիզբները՝ երբ Արտաշիր Սասանեան հին Պարսից ազգէն՝ ապստամբեցաւ ի Պարթևաց և թագաւորին դէմ ելաւ, իրեն հետ միաբանեցան նաև Սուրենի-Պաշլապ և Ասպահապետի-Պաշլապ: Միայն Կարենեան Պաշլապ հաւատարիմ մնացին իրենց բնիկ թագաւորական ցեղին: Որուն չկարցաւ ատենին օգնութեան հասնիլ մեր Խոսրով թագաւորն ալ (հայր Մեծին Տրդատայ), այլ խմանալով Կարենեան ցեղին հաւատարմութիւնը՝ հրաւիրեց որ գան ի Հայս և ապրին ազատօրէն: Սակայն առ ժամն բոլորովին հակառակն եղաւ իր փափագանայ: Վասն զի թէպէտ Կարենեան Պաշլապաց ցեղապետն Վեհասաճան՝ ջանաց երթալ ի Հայաստան, բայց Արտաշիր վրայ հասնելով սպաննեց և ցեղը ջարդեց: Միայն Պերոզամաս անուամբ մէկ փոքրիկ որդին ազատեցաւ իր դայեկաց ձեռքը, թուրքաստանի խորերը փախչելով: Ընդ հակառակն Սուրենեան Պաշլապաց առհասարակ Ս. նակ՝ հաւանեցաւ Արտաշիր, և խաբէութեամբ ասոր թշնամի ձևանալով՝ եկաւ ի Հայս, և գաւով սպաննեց զԽոսրով, թէ և ինքն ալ բոլոր իրեն հետ եկողներով կոտորուեցաւ: և միայն ի Հայաստան ծնած մէկ երախայ տղայն տարեցաւ իր դայեկաց ձեռքով, փախչելով Հռոմայեցոց ինքնակալութեան տակ եղած Փոքր Հայոց աշխարհը: Քիչ ատենէն այս երկու փախստեայ շառաւիղք Կարնան և Սուրենի Պաշլապաց եղան նահապետք Հայոց Պաշլապունեաց, և վերագանեցան քան զբազում նախապատիւ ցեղս Հայոց: Նախ Անակայ որդին Սուրեն՝ քրիստոնէից մէջ մեծնալով անուանեցաւ Գրիգոր, և յետոյ եղաւ Հայոց Լուսաւորիլ, իր ցեղն հայրենական կոչմամբ բուռեցաւ Պաշլապունիք նաև Պարթևք, և արական գծով վեց ազգ յաջորդեցին ի հայրապետութեան Հայոց ինչուան Ս. Սահակ, որ արու զաւակ չունենալով՝ դստերը փեսայացուց Մամիկոնեից պայազատը, ուսկից եր իր մայրն ալ: Իսկ Կարենեանն Պերոզամաս թշնամութեամբ ապրելով Արտաշիր և Շապուհոյ հետ՝ գաւաճանութեամբ մեռաւ: Իր որդին որ իրեն հետ պատերազմի մը մէջ զարնուելով գլխուն մէկ մասն ալ կորուսեր էր, և անոր համար Կամաք կ'ըսուէր ըստ Պարսից (Բէմաէր, պակասագլուխ), շատ տարիներէ վերջը թուրքաց թագաւորին հետ ալ խռովելով, անով տեղով ելաւ եկաւ ի Հայաստան, առ Տրդատ թագաւոր, և մեծ պատուով ընդունելով թիւն գտաւ թէ ի թագաւորէն թէ իր խնամի Ս. Գրիգորէն, որ և յաջողեցաւ՝ յետ ժողովոյն Նիկիոյ, հոգևորապէս ալ խնամեցրնել զնա, հաւանեցրնելով քրիստոնէութեան և մկրտելով: մեծն Տրդատ ալ եղաւ անոր կիցահայր: Կամաք քանի մ'օրէն վախճանեցաւ: Տրդատ անոր անդրանիկ Արշաւիրը՝ ոչ միայն ժառանգ կարգեց, այլ և առհասարակ նախարարութե մը, Կամաքայան անուանելով, որոն ընծայեց արքունական կալուածներ Այրարատայ մէջ Երասխայ ձորոյն վրայ: զոր Արշաւիր իր անուամբն կոչեց Արշաւրանի, որ սովորաբար կ'ըսուէր Արշարունիք: Ինչպէս իր ցեղն ալ, թէ Արշարունիք և թէ Կամաքականք, և երբեմն իրենց հին ծագմամբ Պաշլապունիք: Այս ցեղս պայա-

զատութեամբ կը յիշուի ինչուան Ը դարուն ըսկիզբը, անկէ ետեւ Երախայ իշխանաց ցեղին հետ խառնուած՝ առանձին չի յիշուիր: Իսկ Սուրենեան Պաշլապ, այսինքն Ս. Լուսաւորչի ցեղն՝ Ս. Սահակաւ կը զրաւի, և կը խառնի Մամիկոնեից ձեռնական ցեղին:

Իայց շատ հաւանական է որ մեկէն կամ մեկական շրջ մը, ըլլայ նաև կողմնական շրջ, անորում ըլլայ և յաջորդաբար հասած, ինչուան ի Ժ դար, յորում դարձեալ յերևան կու գան Պաշլապունիք, յետ երկու դար թաքնութեան և լուութեան, եթէ ի Կամաքականաց ցեղէն են, և չորս կամ հինգ դար՝ եթէ ի Սուրենեան ցեղէն են, մեր պատմըաց խօսից նայելով աւելի այս ետքի ցեղին կ'ընծայուին, այսինքն Լուսաւորչի: Բայց ինչ շրջով կամ շարքով յառաջ գալն գեղեցիկ գտած: Միայն հասարակաց վկայութիւնն և Գրիգորի Մագիստրոսի ստեպ յիշելն՝ անսաբաւկոյս կ'ընէ ազգակցութիւնը: Ինքնին իսկ Շնորհալին ալ թուի թէ չէր կրցած ստուգել այս ցեղագրութիւնը, այլ իր նախնիքն գիտէին կ'ըսէ որ այն ցեղէն սերեալ են:

« Սակայն բնութիւն ազգին պահեալ
Որ Պաշլապիկն կոչեցեալ:
Թէ և թագուն իմն ամբոխեալ
Յաւմիկ ազանց միջի ծածկեալ:
Միայն ինքեանց ներհուն եղեալ
Որ յայնմ ազգէ գոյով սերեալ:
Որդի ըզհայր փոխանակեալ
Մինչեւ առ մեզս հասուցեալ »:

Գ. Մագիստրոս և արձանագիրք հին եկեղեցեաց և վանորէից Այրարատայ և Երախայ կը ցուցընեն այս նոր Պաշլապունեաց նախահայր՝ Արքա իշխան մը, իբրեւ ի սկիզբն Ժ դարու: Վասն զի իր թուին Գրիգոր-Համէլ կը վկայուի ծնած յամի 941, և մեռած յ'982: ասոր որդիքն, մանաւանդ Վասակն և Վահրամ կը պայծառանան ի պատմութեան՝ Բագրատունեաց թագաւորութե վերջի ժամանակը և վերջնապէս ալ ետեւ: Ասոնց ժամանակակից յիշուի Հասան իշխան մը նոյն ցեղէն, բայց չէ յայտ իր հայրն: Իսկ որդիքն յայտնի են, որ և մեկայլ շրջին հետ խնամեցան: այսինքն Հասանայ թուին Վասակ՝ Գրիգոր Մագիստրոսի դուստրը կին առած է: և այս երկու մեծ խնամի իշխանք: Գրիգոր Մագիստրոս և Վասակ՝ կ'ըլլան հարք և նախահարք Պաշլապունի նորոգեալ Կաթողիկոսաց, յորոց մի է և մեր Շնորհալին: Ամբողջ երեք դարու միջոց (Ժ-ԺԲ) և մանաւանդ ԺԱ և ԺԲին, անընդհատ մեծագործ և մեծաբարոյ պայազատներ ընծայեց այս Պաշլապունի ցեղս, թէ աշխարհական և թէ եկեղեցական իշխանութեամբ, և յԱրտախայ մինչև ի Գրիգոր Բարապէտ 10 ազգ կամ պորտ են: որք և կրընան իբրեւ ի պատկերի երևնալ շրջագրութեան մէջ: յորում գլխաւոր գիտելիքն նկատմամբ պատմութեան Շնորհալւոյ, են հոգևոր անձինքն, այսինքն Կաթողիկոսունք, որք սկսեալ ի Վահրամայ-Գրիգորէ Բ, որդւոյ Գրիգ. Մագիստրոսի. ի 1065 ամէ մինչև ի Գրիգ. Զ Ապիրատ՝ յամի 1203, զիւրար յաջորդեցին, եթէ Կաթողիկոսք 138 տարի: Ինչպէս որ զարմանալի հանդիպու-

Թեամբ իրենց նախորդք և նախահարքն ալ՝ ի Պ. և Ն. դարս, սկսեալ ի Ս. Լուսաւորչէն՝ յամի 302, մինչև ի Ս. Սահակ՝ ցամն 439, ընծայեցին եօթն կաթողիկոս՝ և յաջորդեցին ի միջոցի նոյնչափ 138 տարիներու։ Այսպէս կերպով մը յետ 626 տարիներու կատարուեցաւ մարգարէութիւնն, կամ խոստումն Աստուծոյ առ Ս. Սահակ, թէ իր ցեղէն նորէն քահանայապետք պիտի ըլլան Հայոց։ Թէ և իր տեսեան մեկնիչն կամ մեկնութիւնն ուրիշ բան ալ կրնայ ցուցնել։

Յայտնի է ամենուն որ եկեղեցւոյ մէջ, ամենայն պայտաւմունք՝ շնորհք Աստուծոյ և ընտրութեամբ մարդկան կը տրուին, և ոչ ընտանութեամբ, կամ աշխարհօրէն ժառանգութեամբ։ Եւ այս է ար. ժանաւոր և իրաւացի։ Թէպէտև հակառակն եւրեցած է շատ հեղ մեր ազգին մէջ, ոչ միայն Պահլաւունեաց տառն, այլ և յառաջ և յետոյ, ինչպէս որ ինչուան մեր դարու՝ Սոյ և Աղուանից (կամ Գանձասարայ) կաթողիկոսաց վրայ։ Եւ ոչ միայն կաթողիկոսաց՝ այլ երբեմն և եպիսկոպոսաց այսպիսի ժառանգութիւնք կ'երեկին ի պատմութեան։ Ինչպէս նախալիչեալ Ճիւղազորութեան մէջ կ'երեկին Սոյ Պահլաւունի եպիսկոպոսաց պայազատութիւն մը դար և կէս ժամանակի միջոց։ Իսկ աշխարհիկ քահանայից նմանապէս ցեղով յաջորդութիւնն ի սկզբանէ մինչև հիմայ շարունակուի։ Եւ միայն Հայոց մէջ չէ, այլ և ուրիշ արեւելեայ ազգք, որոց թոյլ տրուած է ամուսնաւոր երեց ունենալ, թէ այս սովորութիւնս ունին, և թէ պատրիարքաց ազգովն ժառանգութիւն, եղբորորդեաց կամ մերձակորաց միջոցաւ։ Ամեն իւրիշ կրնայ վկայել որ այսպիսի ժառանգութեամբ՝ երբեմն և անարժանք և անյարմարք ի որբաղան աթոռ ելած ըլլան, որոյ և ոչ պատուանդանին մօտենալու բաւական էին. այլ նոյն իսկ խղճի վկայութիւնն կը հաստատէ, որ եթէ ժառանգքն կամ յաջորդք յիրաւի արժանաւոր և ընտիր անձինք էին, ոչ միայն ի մարդկանն այլ և յԱստուծոյ կոչուած ըլլան ի նոյն. ինչպէս յայտնի կ'երեկին մեր Պահլաւունի կաթողիկոսաց վրայ, որոց նման արժանաւոր հայրապետ չէ ունեցած Հայոց աթոռն։ Երբեմն Երեւել և երբեմն ևս այլք մեղադրած են զՀայս, թէ հրէական օրինաց նմանութեամբ՝ ազգաւ կը քահանայանան, և ոչ ըստ Քրիստոսի շնորհնորի օրինաց. — այլ քանի մը բան ալ պէտք էր գիտելին. — նախ, որ ոչ ամեն տեղ հաւասար այսպէս կ'ըլլար ի Հայս, այլ աւելի մասնաւոր տեղուանք կամ աթոռք, մասնաւոր պատճառաւ. և երկրորդ, որ եկեղեցւոյ սկիզբներն ալ այսպիսի սովորութիւն կ'երեկին։ Նոյն ինքն մշտնջենաւոր Քահանայապետն մեր Քրիստոս իր ընտրեալ առաքելոց 12 թուոյն մեջ մտուց իր երկու եղբայրները (ինչպէս որ կ'անուանէին մօրաքեռորդքն) Յակովբ Ալփեան և Յուդա Յակովբեան (որ և Թադէոս կամ Ղեբէոս), երկու ալ նոյնպէս ազգա-

կանքը, Յակովբոս և Յովհաննէս Զեբեդեան. թող իր 70 աշակերտաց մէջ գտուածները։ Առաքեալք ալ յետ համարձման Քրիստոսի ամենէն առաջ Քրիստոսի Եղբայր անուանեալ Յակովբը պատուեցին, գնելով յաթոռ Երուսաղէմի. և առոր նահատակութենէն վերջը՝ 80ամեայ ծեր եղբայրն Սիմոն յաջորդեց. Պետրոս՝ զուսն առաքելոց՝ որ հարազատ եղբայր մ'ունէր առաքելակից՝ իր Մարկոս որդին կամ որդեգիրը կարգեց յաթոռն Աղեքսանդրիոյ. Պողոսի և քարոզութեան ընկերակցին մէջ չփոխութիւն մ'ընկաւ քեռորդւոյ մը պատճառաւ, և այն։ Ասոնց նման ուրիշ օրինակներ ալ կրնայինք բերել եկեղեցւոյ այլ և այլ կողմերէն և այլ և այլ դարերէ։

Գանք մեր ազգին. որոյ մէջ հին ժամանակը, գոնէ Արշակունեաց տառնէն, պայազատական օրէնքն հաստատուած էր ամեն տեղ և ամեն պաշտամանց մէջ, և շատ ալ հաստատ. հեթանոս Հայք ալ ունէին իրենց պայազատ քահանայութեան գլուխը, Քրմապետը, և քուրմերը, ի ցեղէն վահանունեաց. ուրիշ քուրմերն ալ նոյնպէս ժառանգութեամբ կը յաջորդէին։ Ս. Քրիզոստ Լուսաւորիչ՝ մեր նոր առաքեալն և նոր քահանայապետն, որ յամենայնի հեթանոսութեան խոտելի հեռքերը վերուց, անմեղադրելին թողուց, (և չէր ալ կրնար ուրիշ կերպ ընել այնպիսի հնապաշտ և աւանդապաշտ ազգի մը մէջ), քահանայական կարգի մէջ ալ նոյն սովորութիւնը սորբեց թողուց. նախ քուրմերու որդիքները ժողովեց ի կրթութիւն քրիստոնէական ուսմանց, և անոնցմէ ձեւնադրեց 12 նախապատիւ եպիսկոպոս, յայտնի է որ բազմաթիւ ալ քահանայ. որոց եւ կամուտ ալ կապել տուաւ՝ կէս մը թագաւորական ստացուածքէ, կէս մ'ալ իրենց հին կրօնից օրէնքով ժողովուրդէն մասն և նուէրը հանելով։ Կարգն եկաւ Քահանայապետին, որ էր ինքն իսկ. և թէ կամաւ թէ ակամայ, ինչպէս որ յանձն առած էր քահանայապետութիւնը, այսպէս ալ իրեն փոխանորդ և յաջորդ դրաւ իր կուսակրօն կրսեր որդին, Արիստակէսը. միթէ առանց ասոր կրննար Տրդատայ ձեռքէն ազատիլ, և երթալ Սեպուհ լեռանց քարայրից մէջ ծածկուիլ. կամ կարելի էր որ Հայք թողութին իր որդիքը և ուրիշ անձ ընտրէին անոնց տեղ։ Նոյն տառն Աղուանիք ալ հաւատացին ի Քրիստոս, քարոզութեամբ Լուսաւորչին. ասոնց ալ քահանայապետ դրուեցաւ իր թոռը, Քրիզոսիս, անդրանիկն Ս. Վրթմանի, թէպէտև դեռ պատանի էր։ Նոյն ինքն Վրթմանէս ստիպեցաւ յաջորդել իր նահատակեալ եղբորը. և այսպէս իրեն ալ յաջորդեց իր կրսեր որդին Ս. Յուսիկ. իսկ ասոր որդիքն՝ Թագաւորի թոռունք ի մօրէ՝ անարժան ըլլալով սուրբ աթոռոյն՝ իրաւապէս մերժուեցան, և յետոյ աւնոնց մէկուն որդին Ս. Ներսէս յաջորդեց. ասոր ալ իր որդին Ս. Սահակ. այսպէս ի Լուսաւորչէն մինչև ի սա՝ հինգ կամ վեց ազգ սերնդեամբ։ Եւ երբ այս յաջորդաց (կամ հասակին անլիութեան պատճառաւ, կամ իրենց ներկայ չգտուելուն և կամ առ ժամն յանձն չառնելուն պատճառաւ) ուրիշ անձ ընտրել հարկ կ'ըլլար, այս անձինքն ալ պայազատութեամբ կ'ընտրէին Լուսաւորչի Աթոռակալին ցեղէն, որ էր Ալբանոս եպիսկոպոսն, գլխաւորն քրմորդւոց և եպիսկոպոսաց. բուն իսկ

1 Համարելով նաև զՍ. Քրիզոսիս, որ եղաւ Աղուանից կաթողիկոս, բայց ոմանք՝ նաև հին գաւազանազիրք՝ զնա ալ կ'անցնեն ի շար կաթողիկոսաց Հայոց. ընդ հակառակն Լուսաւորչի ցեղէն չեղող աթոռակալները գուրու կը հանեն, անոնց տարիները աւելցնելով Ս. Ներսէսի վրայ, և ասոր ութամեայ հայրապետութիւնը 34 տարի կը հաշուեն։

քրմապետին հայրենիքէն, որ էր Յաշտիշատ, որ յետոյ կաթողիկոսաց ժառանգութիւն և մայր և կեղեցեաց եղաւ, սակայն հին տեարքն հօն պայազատէին. և ահա անոնցմէ եղան Փառնեբոսէհ և Շահակ, նախ քան զՍ. Ներսէս, յետ նորա մինչև 'ի Ս. Սահակ՝ նոյնպէս նոյն ցեղէն Յուսիկ կամ Շահակ, Զաւէն և Ասպուրակէս երեք եղբարք:

Կը շարունակուի:

ՅՈՒՑԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՅԻՏԱԼԻԱ

ՎՅՅԵՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

(Տես երես 137.)

Դ. Յեղանակ (1559-1700).

Դարերով առաջ յիտալիա դիմած քրիստոնեայ ժողովուրդը, Գերմանացիք, ֆրանկք և Սպանիացիք, առանց հակառակութե ընդունեցան մեր բարգաւաճանաց մեծ մասը, իսկ ժ.Դ դարուն մէջ և աւելի ժ.Ձ^ն, երբ մեզի տիրելով՝ մեզի հետ ալ խառնուեցան՝ բոլորն ալ ընդունեցան: Կ'երեւի թէ նախ Գերմանացիք տիրացան մեր զարգացմանց, որովհետեւ իրենք նախ սկսան մեզի խառնուելու. բայց կամ գերմանական հիւսիսային և իտալական հարաւային բարուց տարբերութե համար, կամ կրօնական նոր վարդապետութեց իրարմէ զատելուն համար, շատ յարմար չէին այս զարգացմանց. և այս իտալացւոց համար պատրաստուած խրախճանին՝ ոչ առաջին ոչ երկրորդ և ոչ իսկ երրորդ վայելողքն եղան: Եւ ոչ ֆրանկք առաջին ճաշակողքն եղան, ինչպէս կրը նար կարծուիլ, այլ իրենք ալ, թէպէտ և աւելի պակաս, բայց նոյն օտար զբաղմունքներն ունէին: Սպանիացիք մեր հարաւային եղբայրներն՝ որ մեզի պէս կրօնական վէճերէ ազատ էին, առաջին եղան այս բանիս: Սպանիական լեզուն երկցագոյն է քան զիտալականն՝ 'ի մասին օրինաց, ազգային երգոց և վիպեր.

գայ. բայց զատ այս օրինագրոց և բա. 'նաստեղծութեանց՝ զբաւոր լեզու մը չձեացաւ յառաջ քան զԺ.Ձ դար:

Առաջին նշանաւոր գրիչ եղաւ Կարլ յիլսս տլլա վեկա, ախորժելի բանաստեղծ և հանճարեղ հետեող (թէ և ոչ հպատակօրէն) Բեղրարգային և մեր հովուերգաց Ժ.Դ դարու. շատ հետեողներ ալ ունեցաւ իրեն: Սպանիական բանաստեղծութիւնն մերինէն զատուելով՝ գերազանցեց 'ի տեսարանի. այս տեսակիս մէջ շատ յառաջացան Լուիս-տր-վեկա և Գալտերուն, ետքինս իր ժամանակակցաց մէջ առաջին էր յետ Շէքսպիրի: Իսկ իրենց արձակաբանքն և մանաւանդ պատմիչք հետեող եղան մեզի և մեր յարուցած լատին հեղինակաց: Ասոնց մէջ ալ առաջին եղաւ Մարիանա, որ 'ի Ժ.Ձ դարու ընծայեց իր հայրենեաց ազգային պատմութիւն մը՝ որոյ նմանը դեռ չունի իտալիա: Իրենց վիպապատումք ալ, հռչակաւորն Չերվանդէս՝ Տոն Գիլսոդի հեղինակն ալ մէկտեղ, մեզմէ հեռացան: Ուրիշ տեսակ արձակ գրութեանց մէջ շատ նշանաւոր չեղան. իրենց փիլիսոփայական գրուածներն ալ բան չեն արժեր:

Արուեստից մէջ՝ յետ իտալացւոց Սպանիացիք յառաջագէմ եղան քան զայլս: Յովհան Եռսվանէզ, Մորալէս, Դիպերա, վելսուգէզ և մանաւանդ Մորիյօ կազմեն դպրոց մը շատ գերազանց քան զֆրանկաց, Հոլանտաց, Ֆլամանաց, Գերմանաց և Անգղիացւոց:

Իտալական զարգացմանէ առաջ եկածներուն մէջ յետ Սպանիացւոց կու գան Անգղիացիք: Հռչակաւորն Շէքսպիր և մեծն Պազուն ծաղկեցան 'ի սկիզբն ժ.Դ դարու, երբ ամենայն բարգաւաճանք միայն իտալացւոց և Սպանիացւոց քով գտուէր Շէքսպիր. այս երկուքէն առաւ նիւթերը, կերպերը և այն արուեստի կէս նիւթականութիւնը, զոր մեծ մարդիկ չեն խորշիր փոխ առնուլ, ապահով ըլլալով որ ո՛ր և է գործիք ալ բանեցրնեն՝ պիտի կարենան յաջողիլ և երևելի ըլլալ: Պազուն ալ շատ խրախոյս առաւ իր ժամանակակից Գա.